1 նոյեմբերի 2012 թվականի N 1381 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 21-Ի N 562-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի մայիսի 21-ի «Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից կատարված աշխատանքների գնահատման կարգը, Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից կատարված աշխատանքների գնահատման չափորոշիչները, ինչպես նաև դրանց հիման վրա ձևավորվող գնահատականների միավորները հաստատելու մասին» N 562-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) որոշման 2-րդ կետը «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետին» բառերից հետո լրացնել «, առաջարկել Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնա-ժողովի նախագահին՝» բառերով.

2) որոշման N 2 հավելվածի 20-րդ՝ «Այլ բնագավառներում մարզպետի կողմից կատարված աշխատանքների լիարժեքությունը» բաժնի «Գնահատման լրացուցիչ չափորոշիչներ» ենթաբաժնի՝

ա. 2-րդ կետի 2-րդ սյունակում «Մարզում համայնքի ղեկավարի աշխատակազմում աշխատավարձի պարտքի առկայությունը» բառերը փոխարինել «Տեղական տուրքերի հավաքագրում» բառերով,

բ. 3-րդ կետի 3-րդ սյունակում «3» թիվը փոխարինել «2» թվով,

գ. 3-րդ կետից հետո ենթաբաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4-րդ կետով.

«

4.	ՀՀ ընտրությունների նախապատրաստմանն ու անցկացմանն աջակցություն	1			ՀՀ ՏԿՆ ՀՀ ԿԸՀ

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ